ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1540-Լ «07» 09 2026 թ.

ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշումը, արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ Ա. Պապոյանի զեկուցագիրը և ՀՀ արտաքին գործերի նախարարության 2026 թվականի օգոստոսի 27-ի № 1107/44049-26 գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության (այսուհետ Վարչություն) պետ Թամարա Սարգսյանին 2026 թվականի սեպտեմբերի 7-8-ը ներառյալ գործուղել Սլովակիայի Հանրապետություն, ք. Բրատիսլավա՝ ՏՀԶԿ Միջազգային ուսանողների գնահատման ծրագրի (PISA) Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի միջազգային արդյունքների ներկայացման միջոցառմանը մասնակցելու նպատակով:

2. Գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում Վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել Վարչության հանրակրթության և արտադպրոցական կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի պետ Անուշ Լալազարյանին:

3. Թամարա Սարգսյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Թամարա Սարգսյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գործուղման արդյունքների մասին հաշվետվություն:

9/7/2026

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ